



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ 1457/02/2009թ.
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
դատավորներ՝ Վ.Հովսեփյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ թիվ 1457/02/2009թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«16» հունիսի 2010թ.

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը՝ վճռաբեկության կարգով, կազմով՝

Նախագահությամբ դատավոր՝
Դատավորներ՝

Շ.Օհանյանի
Գ.Գրիգորյանի
Զ.Օհանյանի

Դոնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Արևհատ Սուրենի Միքայելյանի ընդդեմ Սվետլանա Վաղարշակի Դանիելյանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի՝ սենյակների նկատմամբ օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 12-ի որոշման դեմ Ստեփանակերտի քաղաքապետ Վ.Միքայելյանի վճռաբեկ բողոքը՝

Պ Ա Ր Չ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Արևհատ Միքայելյանը 2009թ. ապրիլի 15-ին հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Սվետլանա Վաղարշակի Դանիելյանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի՝ Ստեփանակերտ քաղաքի Ալ. Մանուկյան փողոցի թիվ 120 շենքի թիվ 1 և 1ա սենյակների նկատմամբ օգտագործման իրավունքը ճանաչելու պահանջի մասին:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009թ. մայիսի 19-ի վճռով քաղաքացիական գործի վարույթը կարճել է:

Հայցվորի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով գործի նյութերը, ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2009թ. հուլիսի 10-ի որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. մայիսի 19-ի վճիռը բեկանել և փոփոխել է՝ ճանաչելով Արևհատ Միքայելյանի օգտագործման իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Ալ.Մանուկյան փողոցի թիվ 120 հասցեում գտնվող հանրակացարանի թիվ 1 և 1ա սենյակների նկատմամբ:

Ստեփանակերտի քաղաքապետ Վ.Միքայելյանի վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայելով գործի նյութերը, ԼՂՀ Գերագույն դատարանը 2009թ. հոկտեմբերի 13-ի որոշմամբ բեկանել է ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. հուլիսի 10-ի որոշումն ու գործն ուղարկել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2010թ. հունվարի 29-ի վճռով Արևհատ Միքայելյանի հայցը բավարարել է մասնակիորեն. ճանաչել է Արևհատ Միքայելյանի օգտագործման իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Ալ. Մանուկյան փողոցի թիվ 120 շենքի թիվ 1 սենյակի նկատմամբ և հայցը մնացած մասով մերժել:

Նշված վճռի դեմ 2010թ. մարտի 1-ին վերաքննիչ բողոք է բերել հայցվոր Ա. Միքայելյանը՝ խնդրելով մասամբ բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունվարի 29-ի վճիռը և բավարարել հայցն ամբողջությամբ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը 2010թ. ապրիլի 12-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունվարի 29-ի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է՝ ճանաչելով Արևհատ Միքայելյանի օգտագործման իրավունքը Ստեփանակերտ քաղաքի Ալ. Մանուկյան փողոցի թիվ 120 շենքի թիվ 1ա սենյակի նկատմամբ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ Ստեփանակերտի քաղաքապետ Վ. Միքայելյանը վճռաբեկ բողոք է բերել, խնդրելով ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 12-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունվարի 29-ի վճռին:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը կիրառել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետը, որը չպետք է կիրառեր և չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի երկրորդ մասը, որը պետք է կիրառեր, դրանով իսկ խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի առաջին մասը, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի երրորդ մասը, 1990թ. բնակարանային օրենսգրքի 104-րդ հոդվածը, որոնք պետք է կիրառեր, սխալ է կիրառել «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը ԼՂՀ-ում կիրարկման մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածը, սխալ է մեկնաբանել «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի հիման վրա ընդունված Ստեփանակերտի քաղաքային համայնքի ավագանու որոշումները:

Նշված պնդումը բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի համաձայն՝ սեփականատեր չհամարվող անձինք կարող են ունենալ գույքի օգտագործման իրավունք: ԼՂՀ վերաքննիչ դատարանը, կիրառելով վերը նշված հոդվածը, չի կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածը, համաձայն որի՝ բնակելի տարածության օգտագործման իրավունքի ծագումը, իրականացման պայմանները և դադարումը

սահմանվում են սեփականատիրոջ հետ կնքված, նոտարական կարգով վավերացված պայմանագրով: Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ալ.Մանուկյան 120 հասցեով հանրակացարանի սեփականատեր՝ Ստեփանակերտի քաղաքային համայնքը, վիճելի սենյակը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով սահմանված կարգով հայցվորի օգտագործմանը չի հանձնել, ուստի ճանաչելով հայցվորի օգտագործման իրավունքը, խախտել է սեփականատիրոջ՝ Ստեփանակերտի համայնքի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածով սահմանված իրավունքը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը, որպես վիճելի սենյակի նկատմամբ հայցվորի օգտագործման իրավունքը հաստատող հիմք վկայակոչել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. հունվարի 27-ի վճիռը: Մինչդեռ այդ վճռով դատարանը հայցվորի օգտագործման իրավունքի մասով փաստական հանգամանք չի հաստատել, ավելին. միակ փաստական հանգամանքը, որը դատարանը հաստատված է համարել, և որն արտացոլված է վճռի՝ «դատարանի եզրահանգումները և վերլուծությունները» բաժնում հետևյալն է՝ «դատարանը հաստատված է համարում, որ Ստեփանակերտ քաղաքի Ալ.Մանուկյան փողոցի թիվ 120 հանրակացարանային շենքը գտնվում է Ստեփանակերտի քաղաքային համայնքի բնակելի ֆոնդում»: Ինչ վերաբերում է վիճելի սենյակի նկատմամբ հայցվորի օգտագործման իրավունքին, ապա դատարանը դրան անդրադարձել է «գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը» բաժնում, որտեղ դատարանը որևէ եզրահանգում կամ վերլուծություն, կամ որևէ փաստ հաստատված չի համարում, այլ պարզապես նկարագրում է կողմերի ներկայացրած փաստերը:

1990թ. գործող բնակարանային օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն՝ հանրակացարաններում բնակելի մակերեսը բանվորներին, ծառայողներին հատկացվում է աշխատանքի ժամանակամիջոցի համար ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության ադմինիստրացիայի, արհմիութենական կոմիտեի կոմերիտմիության կոմիտեի համատեղ որոշմամբ՝ պահպանելով հանրակացարանների համար սահմանված նորմերը: Բնակելի մակերես հատկացնելու մասին որոշման հիման վրա ադմինիստրացիան օրդեր է տալիս հանրակացարաններում հատկացված բնակելի մակերեսը զբաղեցնելու համար: Սույն գործով հայցվոր Արևհատ Միքայելյանին վեճի առարկա հանդիսացող թիվ 1ա սենյակը երբևէ չի հատկացվել, ինչը բազմաթիվ անգամ հաստատվել է գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Ա.Միքայելյանի կողմից Ստեփանակերտի քաղաքապետին ուղղված դիմումով, որով հայցվորը ուղղակիորեն նշում է, որ թիվ 1ա սենյակն իրեն հատկացրել են բանավոր /դիմում 06.09.2007թ. թիվ 2342/մ5/: Գործի քննության ընթացքում հայցվորի կողմից վիճելի սենյակն իրեն հատկացնելու որևէ որոշում կամ օրդեր չի ներկայացրել:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքը ԼՂՀ-ում կիրարկման մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական օրենսգրքը կիրառվում է քաղաքացիական այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են օրենսգրքը գործողության մեջ դնելուց հետո /2001թ. հուլիսի 1-ից հետո/: Դատարանը նշված դրույթը կիրառել է, անտեսելով այն փաստը, որ գործում առկա չէ վիճելի սենյակի նկատմամբ բնակարանային օրենսգրքի 104-րդ հոդվածի համաձայն հայցվորի իրավունքի ծագումը հիմնավորող որևէ փաստաթուղթ: Միաժամանակ դատարանն անտեսել է Ստեփանակերտի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը, որն անկախ գրանցումից ծագած է համարվում «ՀՀ քաղաքացիական օրենսգրքը ԼՂՀ-ում կիրարկման մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի ուժով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետի համաձայն՝ ավագանին սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների՝ այդ թվում նաև բազմաբնակարան շենքի սպասարկման համար գանձվող

վճարների դրույքաչափերը: Դրան համապատասխան Ստեփանակերտի քաղաքային համայնքի ավագանին յուրաքանչյուր տարի սահմանում է բազմաբնակարան շենքերի սպասարկման վճար՝ բնակարանների ընդհանուր մակերեսի համար, քանի որ այն գանձվում է ոչ թե բնակելի սենյակների սպասարկման, այլ յուրաքանչյուր բնակարանի ընդհանուր մակերեսին համամասնորեն տվյալ շենքի սպասարկման համար:

Դատարանը սխալ է մեկնաբանել վերը նշված օրենքի դրույթը, նշելով, որ Արևհատ Միքայելյանը վճարել է սպասարկման վճար թիվ 1 և 1ա սենյակների բնակելի՝ 54,06 քառ. մետր մակերեսի դիմաց, անտեսելով այն հանգամանքը, որ բազմաբնակարան շենքերի սպասարկման վճար սահմանելու իրավասությունը պատկանում է Ստեփանակերտի քաղաքային համայնքի ավագանուն և սպասարկման վճարը միշտ էլ սահմանվել է ընդհանուր մակերեսի համար:

Գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 12-ի որոշումը կայացված է նյութական և դատավարական իրավունքի վերը շարադրված նորմերի խախտմամբ, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման և առաջացրել է այնպիսի ծանր հետևանքներ, ինչպիսիք են սեփականատիրոջ՝ ԼՂՀ Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված իրավունքների խախտում:

Խնդրում է ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 12-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. հունվարի 29-ի վճռին:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. Արևհատ Միքայելյանը 1977 թվականից գրանցված և բնակվում է Ստեփանակերտ քաղաքի Ալ.Մանուկյան փողոցի թիվ 120 հանրակացարանային շենքի թիվ 1 սենյակում, իսկ 1990-ական թվականներից օգտագործում է նաև նշված հանրակացարանային շենքի թիվ 1ա սենյակը:

2. Համաձայն գործում առկա անդորրագրերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի «ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 2008թ. հունվարի 31-ի թիվ 51/2 տեղեկանքի՝ Արևհատ Միքայելյանը 1990 թվականից վճարում է թիվ 1 և 1ա սենյակների օգտագործման դիմաց նախատեսված բոլոր վարձավճարները:

3. ԼՂՀ կառավարության 1999թ. մարտի 2-ի թիվ 31 որոշմամբ «Ղարմետաքսկոմբինատ» ՊՓԲԸ հանրակացարանային շենքերը, այդ թվում նաև Ալ. Մանուկյան փողոցի թիվ 120 շենքը հանձնվել է Ստեփանակերտի քաղաքապետարանին: 1999թ. ապրիլի 6-ին Ալ.Մանուկյան փողոցի թիվ 120 հանրակացարանային շենքը «Ղարմետաքսկոմբինատ» ՊՓԲԸ հաշվեկշռից փոխանցվել է Ստեփանակերտի քաղաքապետարանի հաշվեկշիռ:

4. «Ղարմետաքսկոմբինատ» ՊԶ-ն արհմիութենական կոմիտեի բոլոր փաստաթղթերը 1990թ. դրությամբ «ԼՂՀ Պետական արխիվ» ՊՈԱԿ-ում բացակայում են:

5. Ստեփանակերտի քաղաքապետի 27.12.2007թ. որոշմամբ Ալ. Մանուկյան փողոցի թիվ 120 հանրակացարանային շենքի թիվ 1ա սենյակը հատկացվել է Սվետլանա Դանիելյանին:

6. Ստեփանակերտ քաղաքի Ալ. Մանուկյան փողոցի թիվ 120 հանրակացարանային շենքի նկատմամբ գրանցված է Ստեփանակերտի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը՝ համաձայն 28.09.2009թ. թիվ 095387 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի:

3. ԼՂՀ Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճարելի բողոքը նշված հիմքերի սահմաններում, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ վճարելի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վճարելի բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքերով, ուստի ԼՂՀ Գերագույն դատարանի առջև բարձրացված է հետևյալ իրավական խնդիրը՝ առկա է, արդյոք, վերանայվող դատական ակտում նյութական կամ դատավարական օրենքի այնպիսի խախտում, որը հիմք է հանդիսանում վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1. չի կիրառել այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2. կիրառել է այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3. սխալ է մեկնաբանել օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը.

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական ակտը, և բավարարում վճարելի բողոքն այն դեպքում, երբ վճարելի բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Սույն գործով ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը, ճանաչելով հայցվորի օգտագործման իրավունքը վիճելի սենյակի նկատմամբ հիմնավորել է և հանգել է ճիշտ հետևության, որ վիճելի սենյակը հայցվորը զբաղեցնում և օգտագործում է 1990-ական թվականներից /մինչև Ստեփանակերտի քաղաքային համայնքի սեփականության իրավունքի ծագումը/ և վճարում է թիվ 1 և 1ա սենյակների բնակելի մակերեսների համար նախատեսված վարձավճարները:

Ինչ վերաբերում է վճարելի բողոքի հիմքերին և հիմնավորումներին, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է որ դրանք չեն բխում գործի նյութերից և որ բողոքում նշված օրենքները սույն գործով ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն, քանի որ ԼՂՀ բնակարանային օրենսգիրքը ճանաչվել է ուժը կորցրած 2005թ., ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը գործում է 2001թ.-ից: Հայցվորը վիճելի սենյակն օգտագործում է 1990-ական թվականներից և մինչև օրս սենյակը գտնվում է իր տիրապետման ներքո, իսկ Ստեփանակերտի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը Ալ.Մանուկյան փողոցի թիվ 120 հանրակացարանային շենքի նկատմամբ ծագել է 28.09.2009թ.:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված են գործում առկա այն ապացույցների հետազոտման և գնահատման վրա, որոնք բավարար են եղել գործի ըստ էության ճիշտ լուծման համար, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար էական նշանակություն չունեն, ուստի հիմքեր չկան ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալները, և ելնելով արդարադատության արդյունավետության շահերից, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով սահմանված լիազորության ուժով՝ վճռաբեկ բողոքը պետք է մերժել, իսկ վերանայվող դատական ակտը թողնել անփոփոխ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ստեփանակերտի քաղաքապետ Վ.Միքայելյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 12-ի որոշումը թողնել անփոփոխ:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Շ.ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Զ. ՕՀԱՆՅԱՆ**